Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Հայկական կոմիքսներ. Հայկ և Բել»
Կատարող՝ Տարոն Անտոնյան
Ղեկավար՝ Մարիետ Սիմոնյան
Ավագ դպրոց — 11-րդ դասարան

Բովանդակություն

1. Ներածություն
2. Վերապատմում և վերլուծություն
3. Ամփոփում
4. Օգտագործած աղբյուրներ

Ներածություն

Կոմիքսների թեման, ինչպես կարելի է նկատել, ինձ համար բավականին հետաքրքիր է: Եվ հենց այդ պատճառով էլ ես որոշեցի չթողնել, և շարունակել հայկական կոմիքսների թեման:

Իրականում, հայկական կոմիքսներ կային դեռ ինսունականներին: Բայց քանի որ այդ ժամանակ մարդիկ դեռ պատրաստ չէին կոմիքսների ժանրին՝ դրանք մեծ հաջողություն չտեսան:

Սակայն ժամանակն անցնում է, իսկ Հայաստանում կոմիքսների նկատմամբ հետաքրքրությունն աճում է: Հետևաբար շատ ավելի նկարիչներ, հեղինակներ, հրատարակիչներ և պարզապես մարդիկ հետաքրքված են կոմիքսների ստեղծմամբ և տարածմամբ:

Բայց այստեղ էլ կա մի «բայց»: Ասում են՝ եթե կա պահանջարկ, կա նաև առաջարկ: Եվ այս դեպքում, պահանջարկը մեծ մասով բավարարում են արտասահմանյան կոմիքսները, որոնք զարգանում են արդեն տասնյակ տարիներով և մի քանի գլուխ ավելի որակով են մեր՝ տեղականներից: Այդ պատճառով առաջանում է մեծ կոնկուրենցիա և բարձր որակի ստանդարտներ ընթերցողների մոտ, ինչը ստեղծում է բավականին բարդ պայմաններ հայ նկարիչների, գրողների և այլ մարդկանց համար, ովքեր հետքարքրված են կոմիքսների ստեղծմամբ:

Հենց այդ պատճառով էլ կարևոր է շատ աշխատել, որպեսզի փորց ձեռք բերել, զարգանալ և հայկական կոմիքսների ինդուստրիան գոնե փոքր-փոքր քայլերով առաջ տանել: Իսկ հայկական կոմիքսների զարգացումն ունի մի քանի բավականին կարևոր առավելություն.

1. Հայկական կոմիքսների զարգացումը թույլ կտա հայ նկարիչներին, հեղինակներին և սցենարիստներին արտահայտել իրենց մշակույթն ու ավանդույթները յուրահատուկ գեղարվեստական ֆորմատի՝ կոմիքսների միջոցով:

2. Հայաստանում կոմիքսների ոլորտի զարգացումը կնպաստի ամբողջ ստեղծագործական ինդուստրիայի աճին: Դա նոր հնարավորություններ կբացի նկարիչների, գրողների, խմբագիրների, հրատարակիչների և կոմիքսների ստեղծման մեջ ներգրավված այլ մարդկանց համար: Բացի այդ, այն կնպաստի երկրում մշակույթի և արվեստի բազմազանությանը:

3. Իր հասանելիության և ընկալման հեշտության շնորհիվ կոմիքսները կարող են օգնել մարդկանց ազատ արտահայտել իրենց մտքերն ու ստեղծագործական գաղափարները: Կոմիքսը լավ միջոց է նկարիչների և գրողների համար, ովքեր ցանկանում են կիսվել իրենց գաղափարներով և պատմություններով: Իսկ հայկական կոմիքսների զարգացումը միայն թույլ կտա իրենց աշխատանքները ավելի տեսանելի դարձնել:

<u>Վերապատմում և վերլուծություն</u>

Անցած անգամ ես վերցրեցի և համեմատեցի երկու սուպերհերոսական կոմիքս՝ տեղական «Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը» և ամերիկական «Ultimate Spider-Man»-ը: Եվ այդ համեմատության միջոցով ես նշեցի առաջինի թերություններն ու առավելությունները:

Այս անգամ եսկ կվերցնեմ, երևի թե ոչ այդքան հանրաճանաչ, բայց միևնույն է բավականին ճանաչված «Հայկ և Բել. Բաբելոնից դեպի երկիրն Արարատի» կոմիքսը: Նաև, այս անգամ ես չեմ համեմատի այն ուրիշ՝ արտասահմանյան կոմիքսի հետ, այլ պարզապես կփորձեմ ամեն ինչից առանձին վերլուծել:

Բայց սկզբի համար իհարկե կրճատ կվերապատմեմ կոմիքսի սյուժեն, որպեսզի արագ ծանոացնել նրանց, ովքեր չեն կարդացել և օդից չսկսել խոսալ: